# Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ԱՆՀ)

Երկիրը՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագրի անվանումը՝ **«Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր» (ՈՀԲԾ)**
**ՎԶՄԲ փոխառության No.՝ 8267AM**
Պայմանագրի անվանումը՝ ***«Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգի կառուցում»***
Պայմանագիր No.՝ **ISEP/NCB/CW-15/003**

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել ՀԲ-ից՝ «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի» ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել **«Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգի կառուցում» ISEP/NCB/CW-15/003** պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Այս պայմանագրի վճարումները իրականացվելու են Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:

2. **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ՋՏԾԻԳ ՊՀ)** հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին փակ մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ **հողային աշխատանքներ, միաձույլ բետոնի, խողովակներ և խողովակաշարային սարքեր, մետաղական կոնստրուկցիաներ, մեկուսացման աշխատանքներ և շինարարական այլ աշխատանքներ (ըստ ԱԾՑ-ի):**

**Շինհրապարակները գտնվում են.**

- Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգի իրականացման շին.հրապարակը գտնվում է Երևան քաղաքից 17 կմ հեռավորության վրա, իսկ Նորակերտ համայնքից՝ 5 կմ հեռավորության վրա:
- Տկահանի ջրանցքի շին.հրապարակը գտնվում է Երևան քաղաքից 30 կմ հեռավորության վրա, իսկ Սասունիկ համայնքից՝ մոտ 2-5 կմ հեռավորության վրա:

Շինարարական հրապարակները գտնվում են ՀՀ Արագածոտնի մարզում, մասամբ Արմավիրի մարզի ծայր հյուսիս-արևմտյան եզրում:

Աշխատանքների տևողությունը՝ **16 (տասնվեց) ամիս է, ներառյալ վեգետացիոն ժամանակաշրջանը:**

**<u>Որակավորման չափանիշները ներառում են (սակայն չեն սահմանափակվում*).</u>**

- Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (բացի որևէ պայմանագրային կանխավճարից), որոնք բավարար են շինարարության ժամանակ կանխիկ դրամի հոսքը բավարարելու համար, որը կազմում են **173,000,000 ՀՀ դրամ**՝ հանած Մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները:
- Վերջին 3 (երեք) տարիների ընթացքում (սկսած 2013թ. հունվարի 1-ից) շինարարության գծով նվազագույն միջին տարեկան շրջանառությունը՝ հաշվարկված որպես շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների ընդհանուր գումար, բաժանած 3-ի (երեք), պետք է կազմի՝ **778,318,000 ՀՀ դրամ:**
- Շինարարական պայմանագրերի առնվազն 5 (հինգ) տարվա փորձ՝ որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, ենթակապալառու կամ կառավարման կապալառու, սկսած 2011թ. հունվարի 1-ից:
- 2011թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետը ընկած ժամանակահատվածում, հիդրոտեխնիկական կառույցների շինարարության (օրինակ՝ ջրընդունիչ/ջրառ հանգույց/մայր և երկրորդ կարգի ջրանցքներ/ջրազծեր) նվազագույն թվով համանման պայմանագրեր, որոնք Մրցույթի մասնակիցը գոհացուցիչ և էապես ավարտել է որպես գլխավոր կապալառու, ՀՁ անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու. **-1 (մեկ) պայմանագիր՝ առնվազն 553,500,000 ՀՀ դրամ արժեքով:**
- Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում 2011թ. հունվարի 1-ից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն հետևյալ հիմնական աշխատանքների

ներկայացուցիչների ներկայությամբ **2017թ. հունվարի 16-ին ժամը 16:00**-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում:

7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն Մրցութային առաջարկի երաշխիքով (բանկային երաշխիք), որի գումարն է. **20,700,000 ՀՀ դրամ**:

8. Վերևում հիշատակվող հասցեն է.

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Պրն. Ֆելիքս Մելիքյան, Տնօրեն
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, Երևան 0033, Բաղրամյան 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ fmelikyan@wsdp.am; mcharyan@wsdp.am